

կը լինին մէջտեղում, բայց քմահաճցքներն առանց հետեղի կը մնան, իսկ միայն այն ընտրութիւնները կը մնան մէջտեղում և կընդհանրանան, որոնք կամ լեզուի զարգացման ընթացքին համեմատ են, կամ մի որ և է պատմական հանգամանքի ազգեցութեան տակ, աւելի ոյժ ունին ընդհանրանաւու համար, Օրինակ, դիցուք որ և է մէկը ցանկացաւ արեւմտեան լեզուի ըլլալ բայց մտցնել արեւմտեան լեզուի մէջ և զրել ըլլում է, որպիսի ձև հէնց կայ բարբառների մէջ, բայց այդ կը մնայ առանց հետեղների, քանի որ մեր սովորական լեզուի զարգացման համեմատ չէ, իսկ, ընդհակառակն եթէ արեւմտեան լեզուի մէջ մէկն սկսէ զրել ըլլալի փոխանակ լինել, ինչպէս և հէնց վերջնոր սկսել են շատերը զրել, մեծ հաւանականութիւն կայ, որ լինել բայն ընդհանրանայ արեւմտեան լեզուի մէջ, քանի որ լինել ձեւն իրեն թիկունք ունի գրաբառ ձեւ, իսկ բառերի ընտրութեան մէջ երկու աշխարհառ գրական լեզուներն ես զրաբառի ազգեցութեան տակ են:

Այստեղ մենք անցնում ենք արգեն և վերջին հարցին. թէ ի՞նչպէս պէտք է անել այդ շարուեստաւոր գիտակցական ընտրութիւնը, այսինքն երկու գրական լեզուի բազմաթիւ ձևերից որը պէտք է առնել և որը ձգել, որպէսզի լեզուի միութիւն զլուխ գայ, Այս հարցի պատասխանը որը ամբողջ ինդրի մէջ ամենից էականն է, և ամենից զժուարն է, Այստեղ յարգելի Ծաղկաբաղն իրաւունք ունի, երբ ասում է թէ առայժմ մեզ պէտք են հայերէնի ուսումնասիրութիւն, քննադատական գրուածքներ. բայց այդ ուսումնասիրութիւնն ու քննադատական գրուածքները, թէ լեզուի միութեան համար պէտք է լինին, կարծում ենք երկու զլիաւոր բան պիտի պարզեն մեզ համար.

1. Հայոց ամբողջական լեզուն արեւմտեան և արեւմտեան գրական լեզուն և ժողովրդական բարբառները մանաւանդ, իր զարգացման ընթացքի մէջ ընդհանրապէս ինչպիսի ձգտում ունի. այդ ընթացքը գէպի ուր է ուղղած, ուրիշ խօսքով, Հայոց բովանդակ լեզուի մէջ որ ձևերն սկսել են արգեն փոփոխութեան ենթարկուել, ինչ նոր ձևեր են բռնում հների տեղ, որոնք վերջի վերջոյ դուրս պէտք է լընկնեն լեզուի միջից:

2. Ուսումնասիրել թէ ինչպէս է կատարուել երկու գրական լեզուի իրար մերձեցումն իրենց սկզբից մինչև այժմ, զի այդ մերձեցումն իրօք գոյութիւն ունի և կատարուում է այժմ, թէպէտև մեզ համար զգալի չէ:

Եթէ այս երկու հարցի պատասխանը ճշտութեամբ տրուի, այն ժամանակ մենք մի ընդհանուր, թէ ոչ անսխալական, առաջնորդ կունենանք երկու լեզուն եթէ ոչ միացնելու, գոնե մօտեցնելու համար, Սպասենք այդպիսի ուսումնասիրութեան

և քննադատական գրուածքից իսկ մինչ այդ՝ մանր աշխատանքներով ջանանք մեր լեզուներն իրար մօտեցնելու գործը շարունակել:

Մենք գրում ենք իրար մօտեցնելու և ոչ միացնելու գործը, զի այնքան միամիտ չենք, որ կարծենք թէ կարելի է այժմ, առանց որ և է քաղաքական մեծ փոփոխութեան կամ մի ուրիշ նշանաւոր հանգամանքի, երկու գրական լեզուն, որոնք իրենց թէպէտև փոքրիկ, բայց որոշ պատմաթիւնն ունին, ի մի ձուլել և անոնցէ մի կատարեալ միութիւն կազմել, Եթէ այս անել չենք կարող առայժմ, գոնէ երկու կողմի համար հասկանալի զարձնելու շափ մօտեցնել կարող ենք երկու լեզուները, ուստի և կարծում ենք, պէտք չէ լեզուների միացման խրնդրի մէջ անփոյթ մնանք, կամ մեզ բախտաւոր համարենք, ասելով թէ քնութիւնն օժտած է հայ գրականութեան այս պարգևներով, և թօյլ տան, որ այս երկու գրական լեզուն շարունակեն իրենց ընթացքը, Արդարեւ, բնութիւնն ընդարձակ մտքով առած, ոմեն ինչ բնութեան մէջ է կատարուում, բայց եթէ մարդուս գիտակցական գործը սովորաբար բնութիւնից գուրա ենք հանում, այն ժամանակ կամենք, որ բնութիւնը չէ օժտած մեր գրականութիւնն երկու գրական լեզուով, բնութիւնը մեզ միայն բազմաթիւ բառարոներ է տուած, իսկ որ մենք երկու գրական լիզու ունինք, այդ յատկապէս արեւմտեան հայոց անցեալ գրագէտների անհետաստեսութեան շնորհիւ է, Մեր արեւմտեան գրական լեզուն արդի ձևով իսկապէս գոյութիւն պիտի չունենար, եթէ նաբանդեան, նազարեան, Պատկանեան և ուրիշները, որոնք սկիզբն դրին այդ գրական լեզուին աւելի ծանր մտածած լինէին իրենց գործի վրայ և հայութիւնը Ռուսիայի սահմաններից դուրս ևս տեսնէին:

(Կը շարունակույ)

Մ. Արենիս



## ՄԱՆԿԱՎԱՐԺՐՄԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

թէ ի՞նչ ՄԽԶՑԵՐԻ ՊԼՏՔ և ԳԵՄԵՆ ԴՊՐՈՑԵՐԻ ԿԱԿԱԶՆԵԼՈՒ ԱՌԱՋՆ ԱՌԵՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Այսպարութեան վերաբերեալ խնդիրները ներկայում այնքան մշակուած են մասնագէտների կողմից, որ հնարաւոր է յաջողութեամբ կուռել նորա գէմ Դալլոյների բարոյական պար-

տականութիւնն է դործնական միջոցներ ձեռք առնել յիշեալթերութեան զէմիկակազութեան դէմ կոռւելու համար մենք պէտք է աշխատենք զանազաննել նորա տեսանելի ֆիզիքական նշանը և ուղեկցող հոգեբանական կողմբ հոգեբանական կողմն ասելով մենք պէտք է հասկանանք երկիւղի և վշտի այն զգացողութիւնը որ պատճառ է դառնում կակազին յուղուելու, շփոթուելու, երբ նա պատրաստուում է խօսել ֆիզիքական պատճառներից յառաջացած կակազութիւնը շնչառութեան, խիստ սովորական, երկու թերութեանց արդիւնքն է նոցանից մէկը խռչափողի մի քանի մկանունքների ջղաձգութիւնից է յառաջ զալիս որի ժամանակ ձայնական լարերն այնքան են մօտենում իրար, որ անչնարին է լինում յառաջ բերել տատանումն, չետեւապէս և չի կարող ձայն յառաջ զալ, բայցի դրանից, պարզ է, որ այս գէպքում գժուարանում է թոքերից օդ արտաշնչելը: Երկրորդ թերութիւնն է, ընդհակառակը, չափազանց արագ արտաշնչելու մէջ, որ արգելք է դառնում ձայնական լարերի կանոնաւոր տատանման, որից և առաջ է զալիս խանգարումն աղատ խօսելու: Կակազը երբ նկատում է, որ խռչափողի մկանունքների ջղաձրգութեան պատճառաւ չի կարող բառեր արտասանել, փորձում է աղատուել նրանից մարմնական զանազան շաբառմներ անելով կամ միեւնոյն բառերը կրկնելով և կամ իւր խօսակցութեան մէջ զանազան միջանկեալ խօսքեր դնելով, իսկ շատ ուրիշ կակազներ աշխատում են խօսյ տալ այն բառերից, որոնց արտասանելը մեծ գժուարութիւն է պատճառում իրենց: Բայց այս միակ ինքնոգնութիւնը գեռ բաւական չէ: Կակազներին բժըշկել չի նշանակում նրանց նեղ վիճակներից աղատել այլ միջոցներ ձեռք առնել նոցամիանդանցն աղատելու այդ հիւանդութիւնից: Այդ նպատակին համնելու համար գործ են զնում զանազան շնչառական մարմնամարզութիւններ, որոնք նպաստում են շնչառութեան այդ թերութիւնների վերացմանը, որոնց մասին մենք նոր յիշեցինք և որոնք միջոց են տալիս մուտքանակ աղատում նեղ բառերը նոյնապէս կանոնաւոր արտասանելու: Հասկանացի է, որ այդպիսի գէպքե-

րում պէտք է թոյլ տալ կակազին զործադրբելու այնպիսի օժանդակող միջոցներ, որոնք հնարաւորութիւն են տալիս աղատուել այդ ցաւից: մարմնոյ զանազան մասերի նպատակացարմար շարժումներն են, օրինակ ձեռների բարձրացումը ևայնու որուցով կարելի կը լինի թեթեացնել շնչառութիւնը, միայն պէտք է աշխատել որ այդ շարժումները լինին տեղին, բնական, կանոնաւոր և բոլորովին աղատ, բանանալը հիմնովին արգելուում է, որովհետեւ կարող է հասցնել ախուը հետեւանքների:

Չպէտք է կարծել, որ ամեն մի շնչառական մարմնամարզութիւն օգտակար է կակազելուն, օրինակ չի կարելի խորհուրդ տալ պաշելու արտաշնչութիւնը, կանխակալ խորներշնչումից յետոյ, ինչպէս անում են: Ձէ՞ որ այդ կերպ զափելուց պահելուց յառաջ է զալիս ձայնական լարերի խիստ մերձաւորութիւն, որից և զիսաւորապէս յառաջանում է կակազումն: Այն կանոնը, որ խորհուրդ է տալիս կակազներին նախ քան խօսելը խորներշնչել նոյնապէս զգուշաւոր ստուգութեան կարօտութիւն ունի: Յօդուածիս հեղինակը ճանաչում՝ եր մի մանուկ, որի շնչափողը խորհուաչնաքից յետոյ այնպիսի ջղաձգութեան էր ենթարկուում որ մանուկը չէր կարողանում արտասանել մի բառ անդամ մինչեւ որ նորա կողերից սեղմում էին, որով առաջացընում էին բռնի արտաշնչութիւն: Պէտք է զիտենալ որ թէ խօսելիս և թէ արաւաշնչելիս օժանդակող, զիւրութիւն տուողը ոչ թէ ներշնչումն է, այլ օդի կանոնաւոր ծախտումը:

Յաճախ ձայնաւորների նսեմն ոչ պարզ արտասանութիւնից կակազի բառերը դուրս են զալիս ճչոցի և հաջոցի նման: Սրանից աղատուելու համար պէտք է ստիպել կակազին հնչիւնների որոշակի պարզ արտասանութեամբ շատ բազմատեսակ վարժութիւններ անել: Խորհուրդ են տալիս նոյնապէս մի այլ միջոց, որ խիստ ուշադրութեան արժանի է, այն է խօսել շշուկով, որովհետեւ շնորհիւ սորա կակազի խօսակցութեան ձեն անսպասելի կերպով վեղեցկանում և պարզ զիւրիմաց կերպարանք է ստանում: Թէ որքան ժամանակում պէտք է սովորցնել կակազին հնչիւնների ուղիղ և պարզ արտասանութեան արուեստը այդ թող

նուռում է ուսուցչի բարեհայեցողութեանը թանի որ կակազը գեռ մտածումէ այս կամ այն հնչիւնի յարմարաւոր արտասանութեան մասին, քանի որ նա մտածելու առանձին կարիք չի զգում հնչիւնների կատարելիութեան մասին, այդպիսին դեռ չի կարող կանոնաւոր խօսող անձն լինել:

Կակազելու գէմ նախազգուշութիւններ ձեռք առնելու համար անհրաժեշտ է ուշք դարձնել կարգալու արուեստի վերայ:

Բայց գեռ միակ ֆիզիքական պակասութիւնը, որ հիմք է կազմում կակազելուն, ուղղելով՝ շատ զործ կատարած չենք լինի: Ուսութեարանը պէտք է իւր առանձին ուշադրութիւնը դարձնէ գաստիւրակելու աշակերտի ուշադրութիւնը և կամքը, որոնք որպէս հոգեբանական զործ օններ, քիչ գեր չեն խաղում կակազելու զործում: Որքան մեծ լինի նորա մեջ ֆիզիքական թերութիւնները, որ պարզ կերպի խօսակցութեան անկանոնութիւններից, այնքան աւելի ծանր կերպով ճնշուած կը լինի այդպիսի անձի հոգեկան աշխարհը: Ուսուցիչն այդպիսի զբժրագլների տանջանքները թեթեայնելու համար շատ բան կարող է անել: Հեշտացնելով կակազ երեխայի խօսակցութեան արտասանութեան ձեր, նա զորանով նորա մեջ ներշնչում է իւր հիւանդութեան գէմ յաջողութեամբ կոռուելու հաւատ և վսահաւթիւն: Պէտք է աշխատել ամեն միջոց զործագրել մանկան մեջ վսահաւթիւն յառաջ բերելու: Ուսուցիչը չպէտք է իրան թոյլ տայ մանկանը ենթարկել կակազելու այդ ցաւալի ախտին, դորա համար անհրաժեշտ է աշակերտից միայն այնպիսի պահանջներ անել, որոնք նա կարող է անթերի կատարել: Դասարանում հարկաւոր է կակազ երեխաներին զետեղել այնպիսի յարմարաւոր տեղերում որտեղից նորա հնարաւորութիւն կունենան հեշտութեամբ մօտենալ ուսուցչին: Պէտք է աշխատել, որ դասասիսանի ժամանակ կակազ երեխան իրան հանգիստ զգայ: Ուսուցիչը պարտաւոր է նոցա փաղաքշական և քաղցր խօսքերով քաջալերել նորա պարտքն է իւր սեփական օրինակով գժուարահնչիւն բառերի արտասանելու ձեւերը ցոյց տալ և ապա պա-

րապմանց ժամանակ ստեղ ստեղ յիշեցնել դորա մասին: Ծառ ամազկոտ կակազներ սովորութիւն ունին պատասխանելիս ցած նայել: Սոցա կզակները վեր բարձրացնելով պէտք է ստիպել ուղղակի ուսուցչի երեսին նայել: Այդպիսով նշանաւոր չափավ նսկմանում է խաչափողի ընդուղմումը և հեշտանում խօսակցութիւնը: Նթէ մի որ և է բառ արտասանում է իսուլ կերպով և կամ կակազելով, այն ժամանակ նորան հանդիսատ կերպով այնքան պէտք է կրկնել տալ, մինչև որ արտասանի իւր կատարեալ ձեռվ: Պէտք է աշխատել կակազին յաճախակի գաս հարցնել, որի ժամանակ ուսուցչի պարտքն է աստիճանաբար իւր օգնութիւնը թուլացնել: Վաս չի լինի զարգացնել կակազ մանկան մեջ մի տեսակ հնարազիւթեամբ սրամութիւն, յանկարծակի ընդհատելով նորա խօսքը և տուածարկելով բոլորովին մի այլ շրջանի հարց:

Մի քանի ուսուցիչներ պահանջում են աշակերտներից, այսուհետ ասած, վառվառն պատասխան, այդ պահանջը մինչև այժմ քիչ վեսաներ չէ հասցրել մեզ, այս տեսակ վարմանքով մենք ամաչու և երկու բնաւորութիւն ունեցող մանուկներից շուտապ կարող ենք ստանալ կակազ: Յօգուածիս հեղինակն յայսնի է իւր անձնական փորձերից մի քանի գէպք, երբ փոքր զասարանի մի աշակերտ, շնորհիւ թուաբանութեան ուսուցման այս կերպ վարժեցնելուն երեք ամսուայ ընթացքում կակազ զարձաւ: Հանգիստ, հանգարտ վարուեցողութեամբ, համարեա նոյնքան ժամանակում էլ նոյն երեխան բժշկուեց այդ հիւանդութիւնից: Նրբ մի որ և է դասարանում կակազների քանակութիւնը մեծանում է, այն ժամանակ այդպիսի երեղյթների պատճառը բոլորովին համարձակ կերպով կարելի է վերագրել ուսուցչին: Ամենից շատ կակազութեան դէմ պէտք է կռուել միջին զասարանում: Նթէ այսակ յաջողուի բուժել կակազութիւնը, յամենայն դէպս գեռ հարկաւոր է խնամու, զգուշաւոր զիսողութիւն, որովհետեւ այդպիսի երեխաների հետ ունեցած անփոյթ վարմունքը կարող է պատճառ զառնալ նոյն հիւանդութեան երեխան ելնելուն: Այդ պատճառաւ

առողջացած չպէտք է համարել այն դրութիւնը, երբ կակազը ամեն լոսկէ գեռ մտածում է կակազութեան համար ծրագրած մի որոշ շարք կանոնների մասին։ Տանջանքը թեթեացած և ոչ կատարելապէս վերացած պէտք է համարել, եթէ կակազը գեռ կատարելապէս բնական կերպով չի կարող խօսել, որովհետեւ այդպիսինների մէջ հեշտութեամբ կարող է նորից կակազումն յառաջ դալ։

Ռւսումնարաններում կակազութեան գէմ կռուելու մէջ մեծ յաջողութիւն ունենալու համար, հեղինակը առաջարկում է հետևեալ միջոցը՝ աշակերտին դասարանից դասարան փոխազրելիս ուսուցիչը պէտք է ներկայացնէ դպրոցի տեսչին և հետևեալ դասարանի ուսուցչին երեխանների այդ թերութեան կատարեալ և կամ ոչ կատարելապէս բժշկելու մասին մի գրաւոր զեկուցում։ Այդպիսի աշակերտների մասին ուսուցչի կազմած տեղեկագրերը զեկուցանուում է իւրաքանչիւր ամիս տեղի ունեցող ժողովին։ Ցանկալի կը լինէր, որ ուսուցիչը, որքան կարելի է, յաճախակի ուշք գալաճներ կակազ աշակերտների այդ պահասութեան վերայ և աշխատեր զանազան միջոցներով վերացնել այդ։ Սոյնանման տարեկան զեկուցութելիք կարող կը լինին պարզել այդ մուտք կէտը։ Մանուկներին կակազութիւնից բժշկելը դպրոցական վարչութեանց գործն է. խօսակցութեան մէջ թերութիւններով տանջուող աշակերտների հետ ունեցած նրբազգաց, քաղցր և մարդասէր վարմութներով, բարեխիլծ և լուրջ աշխատութիւններով ուսուցիչը կարող կը լինի վերացնել բժշկել յիշեալ թերութիւնը, որով մեծ զարկ տուած կը լինի դպրոցական ընդհանուր յառաջադիմութեան գործին։

Դ. Ղ.

Հարուած ուշադրութեամբ ականջ էին գնում այդ հրաշախօս առարականին։ բազմականներից միայն մէկը չէր լսում, նա պաստորի համարակազմաքացին էր և ուրեմն պիտ գժուարանար պատիւ անել իւր գաւառի մարզարկին։ Անելով մանաւանդ մէկն այն զարգածներից, որոնց հայեացքով ո. Գիրք և Տերեւ անտեղի բաներ են մեր լուսաւորեալ դարի համար։ Մեծ զայրոյթով նկատում էր նա, թէ ինչպէս այդ ձգնաւոր առիւծի բաժին էր վայելում խօսակցութեան մէջ և ինքն ամեններին միջոց չէր գտնում իւր լուսաւոր մաքերը հրապարակ հանել, Վերջապէս նա չկարողացաւ պիտես համբերել և դառնալով յանկարծ սեղանակիններին կանչեց։ «Պարուայք, զգուշացնում եմ ձեզ ամեն կերպ այդ պարոնից։ Ես նորան լաւ եմ ձանաչում. գա մի գայլ և ոյխարի մորրով։ Բոլորը բարկացած շուռ եկան. Միայն պաստորը մնաց բոլորովին հանդիսաւ և ասաց խաղաղ ձայնով։ «Պարուայք, ես իմ կողմից պատճառ շունիմ այդ պարոնից զգուշացնելու։ Ես ևս դորան շատ լաւ եմ ձանաչում. գա մի ոյխար և զայլի մորրով։ Բարձրաձայն քբքիչը փախցրեց ախոյշեանի ախորժակը վէճը շարունակելու։

\*  
\* \*

Մի հետարիցից տեղեկութիւն շուն սիրողներին. — Հատ և շատ անդամ առիթ է եղել հրապարակօրէն յայտնելու շների լորձունքից յառաջացած վտանգի մասին։ Այժմ նորից կրկնում ենք, որ չպէտք է թոյլ տալ թէ փոքր երեխաններին և թէ հասակաւորներին համբուրել շներին, նոյնքան վտանգաւոր է և շների լիզելը որովհետև, ստիպուած ենք կրկնել գորանից յառաջացած վնասները մեծ են և ապագայում կունենան տիսուր հետևեալքներ։ Անհրաժեշտ եմ համարում յիշել այստեղ ՝ D. Stein et Weisen՝ լրագրի հաղորդած մի տիսուր գէպք, որ յառաջացել է լորձունքից։ Մաս ժամանակներում Գալլիա քաղաքում տարօրինակ հիւանդութիւնից մեռաւ մի հարուստ վաճառական։ պարագինները, այդ անտեսանելի մաշող էակները, որ միայն շան ներքին գործարաններում կարող են ապրել քայլքայել էին նորա ներքին գործարաններ։ Անգամահատութեան ժամանակ մի լեարդից 100-ից աւելի պարագիններ են հանուած։ Լեարդի և թռերի միջև արգէն խոց էր դղացել, որից և հիւանդը մեռաւ, Այս գժբախտութիւնը յառաջացել է նորանից, որ վաճառականը թոյլ էր տալիս իւր շանը լիզելու տիրողը։ Շան լորձունքի հետ միասին այդ մանրիկ որդերը անց են կենում մարդու մէջ, որտեղ նոքա բազմանում են շատ արագ և կարող են խիստ վտանգաւոր և մինչև անդամ կորսարեր հետևեալքներ ունենալ ինչպէս վերցիշեալ գէպքում։

\*  
\* \*

800 ասել մարտիկ մէջ. — Ունենագենի ճառագայթների օգնութեամբ մօտ ժամանակներս նիւ—Եօրկում վերին աստիճանի հետաքրքիր մի անդամազնական փորձ է կատարուած. Նիւ—Եօրկում ապրում է Մելինա Մօրֆորս անունով ինիստ տարօրինակ մի 21 տարեկան օրիորդ, որը երկար ժամանակ է տանջուում աօեղներ կուլ տալու և կամ մարմնի մէջ լիսելու անրժշկելի մոլութեամբ։ Սոյնանման մոլութիւններ շատ և շատ անդամ են պա-

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.  
\*\*\*

Մի անուանի պաստոր համբային շրետ էր գնացել, Առաջին օրն իսկ ճաշին նա կարողացաւ իւր կենդանի խօսքերով սեղան նստած բազմամարդ հասարակութեան ուշքը գէպի իրեն գրաւել։ Բոլոր խօսակցութիւնները, հետզհետէ լուեցին. կարծ ես ամենքը կախարդուել լուողութիւն էին դարձել և